ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 40-Լ

«16» 04 2024 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը և դատախազի 1 հաստիքը նույն մարզի դատախազության ավագ դատախազի 2 հաստիքով, Լոռու մարզի դատախազության դատախազի 1 հաստիքը նույն մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով, Սյունիքի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքը նույն մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածի 4-րդ բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 27-րդ գլխի 102-րդ կետի «Դատախազի տեղակալ 2» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 1», 103-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 5», իսկ 104-րդ կետի՝ «Դատախազության դատախազ 6» բառերը՝ «Դատախազության դատախազ 5» բառերով,

2) 28-րդ գլխի 107-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3», իսկ 108-րդ կետի՝ «Դատախազության դատախազ 9» բառերը՝ «Դատախազության դատախազ 8» բառերով,

3) 31-րդ գլխի 119-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 1» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 2», իսկ 120-րդ կետի՝ «Դատախազության դատախազ 3» բառերը՝ «Դատախազության դատախազ 2» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**